

Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՎ ԱԼԻ ԽԱԲԱՆՈՎ

## ՄԻ ԲԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԵՑ

Միջին դարերի սկիզբը զբաղադրույում է հին հունական բժշկականության անկման վերջին շրջանին: Բյուզանդիան՝ ժառանգելով հունա-հռոմեական կուլտուրան և մասնավորապես բժշկականությունը, չունի հին Հունաստանի ստեղծագործական ուժն ու թափը՝ հունական կլասիկ բժշկականության նախկին փայլը վերականգնելու համար: Այնուամենայնիվ վաղ միջնադարում Բյուզանդիան տվել է բժշկականության ասպարեզում մի քանի ահանավոր դեմքեր, ինչպես օրինակ՝ Օրիբազին, Աեցիոսը, Ալեքսանդր Տրալլիացին և Պավլոս Էգրինացին, որոնք դեռ պահպանել և շարունակել են հին հունական բժշկականության արագիցիաները:

Միջին դարերում բժշկական գիտությունների ուսումնասիրման բնագավառում Արևմուտքը աստիճանաբար իր առաջավոր դերը զիջում է Արևելքին, որտեղ հետզհետե աճում է հետաքրքրականությունը դեպի հունական գիտությունները և հատկապես դեպի հունական բժշկականությունը:

Պարսկաստանում, Ասորիքում և Հայաստանում, ուր ներս էր թափանցել հելլենական կուլտուրան և իր խոր արմատները ձգել դեռևս Սելևկյանների տիրապետության ժամանակ, 4-րդ դարում բացվում են հունական ձևի հիվանդանոցներ և բժշկական հիմնարկություններ:

Հայաստանում, ինչպես հայտնի է, այդ հիվանդանոցները բացվել են 354 թվին (այլ տվյալներով՝ 365 թ.) Աշտիշատում տեղի ունեցած եկեղեցական ժողովի որոշմամբ: Կեսարիայում

Բարսեղ Կեսարացիին 370—379 թվերի մեջ կառուցել էր իր աշխարհահռչակ հիվանդանոցային քաղաքը՝ Basileas<sup>1</sup>։

Ասորիքում, հիվանդանոցների հետ միաժամանակ, վանքերին կից բացվում են նաև բժշկական դպրոցներ։ Սրանց մեջ առանձնապես հայտնի է դառնում Եգեսիայի դպրոցը, որը հետագայում կոչվում է «Պարսկական Ակադեմիա»<sup>2</sup>։ Պարսկաստանում գիտութունների և մասնավորապես բժշկականության կենտրոն է հանդիսանում Գոնդիշապուր քաղաքը։ Այստեղ են հավաքվում հույն, ասորի և հրեա գիտնականները, ինչպես նաև Բյուզանդիայից և Եգեսիայից աքսորված նեստորական կրոնավորները, որոնք առանձնապես մեծ դեր են խաղացել Արևելքում հունական գիտութունները տարածելու գործում։

Գոնդիշապուրի հայտնի հիվանդանոցը, որը միաժամանակ և բժշկական դպրոց է հանդիսացել, իր շուրջն է համախմբել Արևելքի բոլոր ականավոր բժիշկներին, որոնց մեծ մասը քրիստոնյա վանականներ էին։ Սրանք թարգմանում են հույն բժիշկների և փիլիսոփաների աշխատութունները, ասորերեն լեզվով, որն այդ ժամանակ Արևելքում ճանաչված էր իբրև գիտության և դրականության լեզու։ Հայկական տառերի գյուտից հետո հույն թարգմանական աշխատանքները լայն չափով ծավալվում են նաև Հայաստանում։

Արաբները 7-րդ դարի երկրորդ կեսին, պատմական ասպարեզ ելնելով՝ նվաճում են Առաջավոր Ասիայի երկրները, Հյուսիսային Աֆրիկան ու Իսպանիան։ Այդ երկրներում հունական գիտութունները և մասնավորապես բժշկականությունն ունեին արդեն կազմակերպված կենտրոններ։ Արաբները կարճ ժամանակամիջոցում յուրացնում են հաղթված ժողովուրդների թե՛ տեղական կուլտուրան և թե՛ տեղերում խոր արմատներ ձգած հունական գիտությունն ու տեխնիկան և ստեղծում են իրենց սեփական գիտությունները, մասնավորապես բժշկականությունը։ Հատկապես վերջինը՝ 10-րդ դարում հասնելով բարձր զարգացման՝ ուժեղ չափով ազդում է արևմտյան բոլոր կուլտուրական ժողովուրդների բժշկականության զարգացման վրա։

Արաբական գիտությունների ծագման և տարածման մասին Լունկևիչը իր «От Гераклита до Дарвина» աշխատության առաջին հատորի մեջ գրում է.—

<sup>1</sup> Мейер-Штейнег и Зудгоф—История Медицины, 1925 г., стр. 149.

<sup>2</sup> С. Ковнер—История средневековой медицины, 1893 г., стр. 192.

«Եթե նեստորականները, մասնավորապես ասորիները և հույն գիտնականները (Ինչպես և որոշ չափով հայեր), օժանդակել են արարներին անսիկ աշխարհի տեղծագործութունների հետ ծանոթանալու գործում, ապա պետք է ասել, որ հրեաները տարածել են արարների գիտութունները ուրիշ երկրներում»:

Եթե, իրոք, հայերը, ինչպես Լուսինիչն է շեշտում, այս կամ այն չափով նպաստել են արարական գիտութունների ծագմանը, ապա մեր առաջ խնդիր է դրվում պարզելու, թե ինչ չափով են հայ բժիշկները մասնակցել արարական բժշկականության ծագման ու զարգացման գործին:

Ինքը Լուսինիչը չի նշում այն աղբյուրները, որոնց վրա հիմնվելով՝ նա հանդել է այդ եզրակացությանը: Այդ մասին ոչինչ չեն ասում նաև հայ պատմագիրները: Հինգերորդ դարի հայ հեղինակների (Եղիշի, Եղիշեի, Դավիթ Անհաղթի և մյուսների) աշխատութունները ուսումնասիրությունից երևում է, որ հայերն այդ ժամանակ արդեն լայն չափով յուրացրած են եղել հունական գիտություններն ու բժշկական գիտելիքները: Նրանց սովորյալները վիճարկում են այն մասին, որ Հայաստանում այդ ժամանակաշրջանում գոյություն է ունեցել հիվանդանոցների և այլ բժ. հիմնարկների մի ամբողջ ցանց: Սակայն, նույն այդ շրջանի հայ բժիշկները և նրանց գործունեության մասին միջնադարյան հայ գրականության մեջ տեղեկություններ համարյա չեն մնացել: Ասորական աղբյուրները հիշում են միայն Գաբրիել անունով մի բժշկի մասին, որը 7-րդ դարում Պարսից թագավոր Պոսրովի արքունական բժիշկն է եղել (Լ. Հովհաննիսյան): Բժ. բժիշկ Գաբրիելի բժշկական գործունեության մասին ասորական աղբյուրներն առանձնապես ոչինչ չեն ասում: Նրանք հիշում են Գաբրիելին զլխավորապես նրա համար, որ սա, իբրև լուսավորչական, ուժեղ կրոնական պայքար է մղել նեստորականների դեմ:

Հայ բժիշկների և նրանց գործունեության մասին, սակայն, քավականաչափ հետաքրքրական ու կարևոր տեղեկություններ են բովանդակում օտարերկրյա գրական աղբյուրները:

10-րդ դարի հայտնի արաբ ճանապարհորդ և աշխարհագրագետ Իբն Հաուլը իր «Գիրք ճանապարհների և թագավորությունների մասին» աշխատության մեջ այսպես է բնութագրում այն հայ բժիշկներին, որոնց նա հանդիպել էր Հայաստանում իր ճանապարհորդության ժամանակ. «Նրանք ունեն փորձված բժիշկներ, որոնք հարուստ և փայլուն են իրենց բժշկական գիտելիք»:

ներով<sup>1</sup>։ Վաղ միջնադարյան շրջանի հայ բժիշկների և նրանց գործունեության մասին ավելի պարզ ու որոշակի տեղեկություններ է տալիս մի այլ աղբյուր։

Վերջերս Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բժշկություն, և Բիոլոգիայի պատմության սեկտորի ձեռնարկած Մատենադարանի պարսկական բժշկական ձեռագրերի, ուսումնասիրությունները տվին այդ մասին մի շարք կարևոր տվյալներ։

Մատենադարանի պարսկական ձեռագրերի բաժնի աշխատակից Ալի Շաբանովը, որին սեկտորը հանձնարարել էր որոշ նյութեր թարգմանել պարսկական բժշկական ձեռագրերից, պարզեց է, որ երկու ձեռագրերի մեջ հիշվում են ինչ որ հայ բժիշկների անուններ։ Այդ տեղեկությունները Շաբանովը հայտարարել էր № 19 և № 464 բժշկական ձեռագրերի մեջ։

№ 19 ձեռագիրը արտագրված է 1669 թ. (Երբ է գրված ընագիրը, հայտնի չէ)։ Ղազվինում։ Գրքի հեղինակն է Միրզա Մուհամեդ Թանգարին։ № 464 ձեռագիրը նույնպես բժշկական է, գրված 1739 թ. Նախիջևանում։ Սրա հեղինակն է Ախունդ Մուլլա Մոյսուն Ֆեխնամազ Նախիջևանին։

Հավանորեն այս վերջին հեղինակը օգտվել է Թանգարինի աշխատությունից, որը ավելի հին է, կամ թե երկու հեղինակներն էլ իրենց ձեռքի տակ են ունեցել մի ավելի հին աշխատություն, որովհետև մեզ հետաքրքրող տեղեկությունները համարյա բառացի կրկնվում են երկու ձեռագրերի մեջ։ Միաժամանակ պետք է շեշտենք, որ այս երկու ձեռագրերի ընդհանուր բովանդակությունը տարբերվում են իրարից։

Ահա ինչ է գրում № 19 ձեռագրի հեղինակ Թանգարին իր աշխատության մեջ.

«Հարուն-առ-Ռաշիդի ժամանակ մի դեղատոմս է եղել՝ բերանը անուշ անելու և ըերանի լորձը կտրելու համար ... Բախշուռ հայ շեխը (այսինքն՝ գիտնականը—Գ. Հ.) իր կողմից ավելացնում է հետևյալը ... բայց իր որդի Ջաբրահիլը ավելացնում է ակրկարա ...» և այլն (ձեռ. № 19, էջ 380)։

Բախշուռն, կամ ինչպես նա հայտնի է բժշկականության պատմության մեջ՝ Բախտիշուռան և նրա որդի Ջաբրահիլը կամ Գաբ-

<sup>1</sup> Сборник материалов для описания племен и местностей Кавказа. Ибн Хаукал. Книга путей и царств. Н. А. Караулов, 1905 г., стр. 100.

քիեւը իսկուպես ապրել են Հարուն-առ Ռաշիդի ժամանակ և նրա արքունական բժիշկներն են եղել, այնպես որ հեղինակի տված այդ պատմական տեղեկութունը միանգամայն ճիշտ է և համապատասխանում է իրական պատմութեան:

Սոսեոյով կոկորդի հիվանդութեանները դեմ գործադրվող մի քննչ որ դեղանյութի մասին՝ Թանգարին ասում է. «Այս գյուտը Բախշոուի հայրը Ջորջիսն է արել ...» (ձեռ. № 19, էջ 378):

7-րդ էջի մեջ Թանգարին գրում է, որ Ջորջիսը բժիշկ Իոհաննայի որդին է եղել:

Վերջապես նույն հեղինակը 177-րդ էջում գրում է հետեւյալը՝

«Սրապիոնի մասին շեյխ Ռայիսը (այսինքն՝ Իբն Սինանը— Գ. Հ.) ասում է, որ այս շեյխը հայ է...»: Թե որ Սրապիոնի մասին է Իբն Սինան ասել, որ այս դիտնականը հայ է եղել, պարզում են Թանգարիի գրքի հետևյալ տողերը. «Աբուլուսի մասին մի քանիսը ասում են, որ սա մախալի մի տանկն է, ուրիշները ասում են, որ դրամի տանկն է, բայց Սրապիոնի որդի Իոհաննան ասում է, որ արուսը կրեք կրատն է...» (ձեռ. № 19, էջ 306):

Նույն տեղեկութունները կրկնում է նաև Ախունդ Մուլա Մոյսուներ իր գրքի (ձեռ. 464) 27, 28, 30 և 255 էջերում: Վերոհիշյալ բժիշկները, որոնց անունները հիշում են Միրզա Մուհամեդ Թանգարին և Ախունդ Մուլա Մոյսուներ, արաբական բժշկական հաստատության ծագման շրջանում գործող բժիշկների շարքերում քաղաքականացի պատվավոր տեղ են գրավել: Սրանց տոհմերը դարերի ընթացքում մի շարք բժիշկներ են տվել, որոնք մեծ դեր են խաղացել արաբական բժշկականութեան ծագման և դարգացման պատմության մեջ:

Կովների (Ковнер) տվյալների համաձայն, արաբները 8-րդ դարի վերջերին ունեին միայն մի թարգմանական բժշկական աշխատութուն և երեք ալքիմիական գիրք, իսկ մի դար հետո նրանք համարյա ամբողջովին յուրացրել էին հունական բոլոր գիտութունները: Գիտական այս մեծ հեղաշրջմանը մեծադույն չափով նպաստել էր Բախաշխան բժշկական տոհմը: Կովները՝ հիմնը վերջով Leclerc-ի տվյալների վրա գրում է, որ այս տոհմը, սկսած 754 թվից մինչև 1006 թվիվը, այսինքն՝ մոտ 250 տարվա ընթացքում տվել է մի շարք ականավոր բժիշկներ: Այս տոհմի առաջին բժիշկը, ըստ Leclerc-ի եղել է Ջորջիսը, կամ Գեորգը, որին խալիֆ Ալ-Մանսուրը հրավիրել էր իր մոտ և հանձնարարել՝ կատարելու մի

շարք թարգմանություններ՝ նույն Կովների ասելով՝ Գեորգիի ներկայութեանը Բաղդադում գիտական կատարյալ հեղաշրջում է առաջ բերում ամբողջ Արևելքում: Գեորգին և նրա սոսմակից բժիշկները երկար տարիների ընթացքում թարգմանել են ավելի կամ անձամբ թարգմանել հունարենից ու ասորերենից մեծ քանակութամբ բժշկական գրքեր և այլ գրականութիւն: Հարուն-առ-Ռաշիդի և էլ Մամուտի առատաձեռնութեան շնորհիվ թարգմանական աշխատանքները շարունակվել են և սրանց իշխանութեան օրոք: Հարուն-առ-Ռաշիդն իր մոտ իբրև արքունական բժիշկներ պահելիս է եղել Բախշոուն և նրա որդի Գաբրիելին: Առանձնապես բեղմնավոր է լինում Գաբրիելի գործունեութեանը: Բացի բազմաթիվ թարգմանական աշխատանքներից, որ կատարվել են նրա պատվերով և մասնակցութեամբ, նա գրել է մի շարք ինքնուրույն աշխատութիւններ, որոնցից այժմ հայտնի է վեցը: Այս սոսմի բժիշկների գործունեութեանը չի սահմանափակվել միայն գիտական աշխատանքով: Դրանցից մի քանիսը՝ ղեկավարելով Դոնդիշապուրի հիվանդանոցը, պատրաստել և դաստիարակել են մի քանի սերունդ երիտասարդ բժիշկներ: Միրզա Մուհամեդ Թանգարին և Ախունդ Մուլլա Մոյսունը հիշում են բժիշկների այս սոսմից միայն չորս անուն՝ Իոհաննան Ջորջիսը, այսինքն՝ Գեորգին, Բախշոուն և Ջաբրայիլը, կամ Գաբրիելը: Մի այլ պարսկական ձեռագրի (ոչ բժշկական) մեջ հիշվում է նաև Գաբրիել որդի, երկրորդ Բախշոուն: Կովները և Leclerc-ը հիշում են Բախտիշուայի սոսմից ութ բժշկի անուններ, որոնք են՝ Գեորգի, ապա երկրորդ Գեորգի, Բախշոուն, Գաբրիել, երկրորդ Բախշոուն, Սաբուր, Սահել և վերջապես Աբու Սահլ: Այս վերջինը, ինչպես հայտնի է, եղել է Իբն Սինայի ուսուցիչը (Ковнер):

Թանգարիի տվյալների համաձայն՝ Գեորգիի հայրը բժիշկ Իոհաննան է եղել: Սրա մասին Leclerc-ը, որը հատկապես ուսումնասիրել է Բախտիշուայի ընտանիքի պատմութեանը, ըստ երևույթի, ոչինչ չգիտե: Սա մի կարևոր հանգամանք է, որը ցույց է տալիս, թե Leclerc-ը և Կովները Բախտիշուայի ընտանիքի մասին լրիվ և սպառիչ տեղեկութիւններ չեն ունեցել:

Ինչ վերաբերում է Սրապիոնին և նրա որդի Իոհաննային, պետք է ասել, որ սրանք նույնպես արաբական բժշկականութեան ծագման շրջանի ականավոր գիտական գործիչներից են եղել:

Ըստ Մայր-Շտայնեզի և Զուդհոֆի, սրանք ապրել ու գործել են IX դարում:

Բժշկագիտության պատմության մեջ սրանց մասին տեղեկություններն այնքան էլ պարզ չեն և անգամ հակասում են իրար: Կոմենթը՝ հիմնվելով Leclerc-ի տվյալների վրա՝ պնդում է, որ Սրապիոնի՝ որդի Իոհաննան պատմության մեջ հայտնի Հովհաննես Դամասկացին (Johannes Damascenus) է: Մայր-Շտայնեզ և Զուդհոֆել գրում են, որ Johannes Damascenus-ը Իոհաննա իրն-Մազավախին, կամ Մեսսուեն է: Բժշկագիտության պատմաբանների այս տարակարծությունները ցույց են տալիս, որ Սրապիոնի և նրա որդու մասին եղած տեղեկությունները չափազանց անորոշ են: Հայտնի է, որ Սրապիոնն իր աշխատությունները գրել է ասորերեն, կասկած է առաջանում, թե ինչու արաբական բժշկագիտության մի ներկայացուցիչ 9-րդ դարում պետք է գրեր իր գիտական աշխատություններն ասորերեն և ոչ թե արաբերեն: Այս հանգամանքը ստիպում է մեզ ենթադրել, որ Սրապիոնը ապրել է ոչ թե 9-րդ, այլ 8-րդ դարում: Գանի որ Թանգաբին պնդում է, որ Սրապիոնը նույնպես հայ է եղել, հավանական է, որ նրա որդի Իոհաննան՝ Գեորգի Բախտիշուայի հայր՝ բժիշկ Իոհաննան է եղել:

Թանգաբիի այս վկայությունները ստուգելու և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ մենք գիմեջինք Մատենադարանի պարսկական այլ ձեռագրերի օգնություն:

Մատենադարանի № 302 ձեռագրի մեջ, որը կրում է «Ջամ էլ Հեքայաթ» (այսինքն՝ «Պատմությունների ժողովածու») վերնագիրը և 1379 թ. գրչություն է, հեղինակը գրում է հետևյալը.

«Հարուն-առ-Ռաշիդը իր տանը Թարսա Բախշու բժշկի հետ, զրույցի ժամանակ ներս է մտնում վեզիր Բարմաքին»... (ձեռագիր 302, էջ 74): Ըստ պարսկա-հայկական բառարանի «թարսա» խոսքը երկու նշանակություն ունի՝ «քրիստոնյա» և «կրակապաշտ», իսկ ըստ Ալի Շարանովի նաև երրորդ՝ «հայ»: Պարսիկները «թարսա» են կոչել հատկապես հայերին: «Թարսա» բառի այս երրորդ իմաստը ճշտվում է նաև հետևյալ վկայությամբ.—

Նույն աշխատության հեղինակը մի ուրիշ տեղ գրում է հետևյալը. «Երբ Բարեկը խալիֆների հետ կռիվ սկսեց, չկարողացավ գիմադրել, դուրս եկավ բերդից իր ընտանիքի հետ միասին և եկավ Արմենիա: Նասրանի Ստիլի մարդիկ ճանաչեցին

նրան, բռնեցին և հանձնեցին խալիֆի մարդուն, որը 10000 դրամ տվեց այդ թարսային և 2000 դրամ տվեց այն թարսային, որ տարավ և հանձնեց նրան Բաղդադ» (ձեռ. 302, էջ 78)։

«Նասրանի» բառը պարսկերեն նշանակում է «նազովրեցի», այսինքն՝ «քրիստոնյա»։ Սակայն, ինչպես վերևում ասվեց, «թարսա» բառը նույնպես «քրիստոնյա» է նշանակում։ Ներկա դեպքում մի նախադասութան մեջ հեղինակը հաղիվ թե ցանկանար «քրիստոնյա» բառի իմաստը երկու խոսքով արտահայտել։ Այս դեպքում հեղինակը «նասրանի» բառը գործ է ածել ընդհանրապես «քրիստոնյա» իմաստով, իսկ «թարսա» բառը՝ կոնկրետ, հատկապես «հայ» նշանակությամբ։

Որ հեղինակը իսկապես «թարսա» ասելով ցանկացել է «հայ» ասել, երևում է հեղինակի սեփական բացատրությունից, որ նա տալիս է «թարսա» բառին։ Խոսելով ժողովուրդների ծագման և հայերի Հայաստան գալու մասին, նա փորձում է բացատրել, թե ինչու հայերին «թարսա» են ասել։ Նա գրում է.

«Թարսա» ասել են նրա համար, որ սրանք համաձայն իրենց հին սովորութան՝ աչրում էին իրենց մեռելներին... Սրանց մեջ մի մարդ կար Չորջիս անունով, որ քարոզում էր նրանց մեջլիսներում, թե այդ բանը չանեն...» (ձեռ. 302, գլ. 10, հատ. 4)։ Հայերը, ինչպես և պարսիկները, կրակապաշտ լինելով՝ չէին կարող մեռելներն այրելու սովորություն ունենալ։ Բացի դրանից՝ հայտնի է, որ պարսիկները թե՛ իրենց և թե՛ հայերին, երբ այս երկու ազգերը դեռ կրակապաշտ էին, «թարսա» էին անվանում։ Սակայն մահմեդականություն ընդունելով, բնականաբար, պարսիկներն իրենց այլևս «թարսա» չէին կարող անվանել և այդ «թարսա» բառը, իբրև կիսահեզնական, ուղիղին ներհակ, հակառակ, ծուռ,—մնաց միայն հայերի վրա։ Այդ իմաստով էլ, կարծում ենք, «թարսա» բառը գործ է ածում «Ջամ էլ Հեքայաթի» հեղինակը՝ հայ Բախրոու բժշկի մասին խոսելիս։

Նույն նշանակությունն է տալիս «թարսա» բառին նաև № 2 պարսկական ձեռագրի հեղինակը։ Վրացիների մասին խոսելիս՝ նա նրանց «Կյուրջի-նասրանի» է անվանում, իսկ հայերին՝ «թարսա»։

Այսպիսով, «Ջամ էլ Հեքայաթ»-ի հեղինակի վկայությունը, որ Բախրոուն «թարսա» էր, այսինքն՝ հայ, հաստատում է Միրզա Մուհամեդ Թանգարիի և Ախունդ Մուլլա Մոյսունի տվյալներով։

Ի ղեպ, պետք է նշել, որ պատմագիրները Բախշուռի և Սրապիոնի որևէ ազդեցության պատկանելու մասին ոչինչ չեն ասում: Նրանք շեշտում են միայն, որ այդ ահանալոր բժիշկները քրիստոնյա են եղել:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե որքան վստահելի են վերոհիշյալ պարսիկ աղբյուրները, պետք է ասել հետևյալը: Ինչպես ցույց է տալիս Թանգարթի ձեռագրի մեջ եղած հիշատակարանը, Թանգարթի նախնիները նույնպես բժիշկներ են եղել: Այս հանգամանքը հավանական է դարձնում այն, որ իր ձեռքի տակ հավանաբար ունեցած պիտի լինի իր տոհմի նախորդ բժիշկներից մնացած հին և վստահելի աղբյուրներ: Բացի այդ՝ Թանգարթին չէր կարող անհիմն վկայակոչել Իրն Սինային, քանի որ վերջինիս աշխատություններն այնքան տարածված են եղել Արևելքում, որ Թանգարթի կեղծիքը կնկատեր ամեն մի բժիշկի վերջապես ինքը Թանգարթին պարսիկ լինելով՝ ոչ մի շահ չունենր երկու հուշակալոր և մեծանուն բժիշկներին դիտավորյալ կերպով հայ անվանել: Ենթահանել է նաև Իրն Սինայի վկայությունը, քանի որ նրա ուսուցիչը Աբու Սահլը եղել է Բախտիշուայի տոհմից: Այդ ամենին պետք է ավելացնել այն, որ պարսիկ հեղինակը շատ ավելի տեղյակ է եղել հայ բժիշկներին և նրանց դործունեության, քան այդ ցույց են տալիս վերոհիշյալ փաստերը:

Ալի Շաբանովը իր ձեռագրական պրպուստների ընթացքում պարզել է, որ Ախունդ Մուլա Մոյսունը իր աշխատության առաջին էջում հիշում է 15-րդ դարի հայտնի հայ բժիշկ Ամիրզովլաթի անունը: Մոյսունը առանձնապես շեշտում է նրա աշխատությունների նշանակությունը դեղագիտության ասպարեզում և իր գրքքի մեջ մի շարք մեջբերումներ է անում նրանցից: Համեմատելով այդ մեջբերումները Ամիրզովլաթի «Անգիտաց անպետ» և «Օղուտ բժշկության» աշխատությունների համապատասխան հատվածների հետ՝ մենք համոզվում ենք, որ մեջբերումները իսկապես Ամիրզովլաթի այդ աշխատություններից են արված: Պարզվում է նաև, որ Ախունդ Մուլա Մոյսունը գիտե Ամիրզովլաթի իսկական անունը, որը մինչև հիմա անհայտ է եղել: Ախունդ Մուլա Մոյսունի տեղեկությունների համաձայն՝ Ամիրզովլաթի իսկական անունն է Ջորջիս կամ Գեորգ:

Ձի կարելի, իհարկե, պատահական համարել պարսիկ հեղինակների այդպիսի հետաքրքրությունը հայ բժիշկների նկատ-

մամբ: Պարսկաստանն ու Հայաստանը դարերի ընթացքում կապ-  
ված են եղել իրար հետ տնտեսական, քաղաքական և կուլտու-  
րական սերտ կապերով: Այս է պատճառը, որ հայկական թե-  
քաղաքական և թե մասվոր կյանքի նշանավոր դեպքերը և ականա-  
վոր հայ գործիչների գործունեությունը այս կամ այն չափով  
արտացոլվել է պարսկական միջնադարյան գրականության մեջ:

Օտար գրականության մեջ եղած այս տվյալները արժեքա-  
վոր են այն տեսակետից, որ նրանք նոր լույս են սփռում միջ-  
նադարյան հայ բժշկագիտության և բժիշկների գործունեության  
վրա: Նրանք ցույց են տալիս այն մեծ դերը, որը կատարել են  
հայ բժիշկներն ընդհանուր բժշկագիտության զարգացման աս-  
պարեզում:

Այս վերջին հանգամանքը դուրս է բերում միջնադարյան  
հայ բժիշկների գործունեության նշանակությունը նեղ ազգա-  
յին շրջանակներից և պատվավոր տեղ է տալիս նրան ընդհա-  
նուր բժշկագիտության պատմության մեջ:

Г. Г. АРУТЮНЯН И АЛИ ШАБАНОВ

#### НЕКОТОРЫЕ ДАННЫЕ, ОТНОСЯЩИЕСЯ К ЭПОХЕ ВОЗНИКНОВЕНИЯ АРАБСКОЙ МЕДИЦИНЫ

В работе приведены обнаруженные авторами в Матенадаране ману-  
скриптные материалы, написанные на иранском языке, в которых сооб-  
щены данные о той роли, которую, кроме греков и сирийцев, сыграли ар-  
мянские врачи в деле ознакомления арабов с древнегреческой медици-  
нской литературой. Иранские врачи Мирза Мухамед Тангаби (XVII век) и  
Ахунд Молла Мойсуи Фихнамаз (XVIII век) указали, что некоторые из  
выдающихся врачей эпохи возникновения арабской медицины, как, напр.  
Бахтишуа и Серапион, были армянами, а не сирийскими несторянами,  
как это до сих пор считали.

Сказанное подтверждается также средневековыми иранскими рукопи-  
сьями не медицинского происхождения.

Данные эти представляют армянскую медицинскую культуру в пе-  
риод раннего средневековья в совершенно новом освещении.